ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ստորագրված պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները, այսուհետև՝ անդամ պետություններ,

համաձայնեցին նեքրոհիշյալի մասին.

Հոդված 1

«Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ստորագրված պայմանագրի 8-րդ հոդվածի 1-ին կետում կատարել փոփոխություն՝ «Ղրղզստանի Հանրապետության կողմից Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի կիրառման ամսաթվից երեք տարի ժամկետով» բառերը փոխարինելով «Մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամկետով» բառերով:

Հոդված 2

Սույն Արձանագրությունը ժամանակավորապես կիրառվում է 2018 թվականի օգոստոսի 12-ից և ուժի մեջ է մտնում սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անդամ պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ավանդապահի ստանալու ամսաթվից:

Այն անդամ պետության համար, որի օրենսդրությունը չի նախատեսում

միջազգային պայմանագրերի ժամանակավոր կիրառման հնարավորություն, սույն Արձանագրությունը կիրառվում է այդ անդամ պետության կողմից սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու ամսաթվից և տարածվում է 2018 թվականի օգոստոսի 12-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Այն անդամ պետության համար, որի օրենսդրությունը չի նախատեսում միջազգային պայմանագրերի ժամանակավոր կիրառման հնարավորություն, սույն Արձանագրությունը Ղրղզստանի Հանրապետության կողմից կիրառվում է այդ անդամ պետության կողմից սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից և տարածվում է 2018 թվականի օգոստոսի 12-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Կատարված է Սոչի քաղաքում 2018 թվականի մայիսի 14-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերենով:

Սույն Արձանագրության բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը, որպես սույն Արձանագրության ավանդապահ, անդամ պետություններից յուրաքանչյուրին կուղարկի դրա հաստատված պատճենը:

Հայաստանի Հանրապետության կողմից՝	**Բելառուսի Հանրապետության կողմից՝**	**Ղազախստանի Հանրապետության կողմից՝**	**Ղրղզստանի Հանրապետության կողմից՝**	**Ռուսաստանի Դաշնության կողմից՝**

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2018 թվականի մայիսի 14-ին Սոչիում ստորագրված «Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ստորագրված պայմանագրում փոփոխություն կատարելու մասին» արձանագրության հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն